Լիլիթ Վիկտորի Դալլաքյանի ԻԳ.00.02. - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հարավկովկասյան էթնոքաղաքական հակամարտությունները ՌԴ-ԱՄՆ աշխարհաքաղաքական շահերի համատեքստում» վերտառությամբ ատենախոսության մասին

Կարծիք

Պաշտպանության ներկայացվող ատենախոսության թեման արդիական է և կարևոր: Թեմայի կարևորության մասին առաջին հերթին վկայում է այն փաստը, որ հարավկովկասյան էթնոքաղաքական խնդիրների նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է և դրանց միջոցով տարածաշրջանում իրենց շահերը սպասարկելու գերտերությունների քաղաքականությունը՝ ակտիվանում:

Ներկայացվող աշխատանքը բաղկացած է ներածությունից, ենթագլուխներով բաժանված երկու գլուխներից, եզրակացություններից և աղբյուրագիտական բազայի տեսությունից: Աշխատության ներածական մասում հեղինակը սահմանել է նպատակ ու խնդիրներ, իսկ ուսումնասիրության մեջ անդրադարձել է յուրաքանչյուրին՝ տալով սահմանած հարցադրումների պատասխանները: Ուսումնասիրության արդյունքներն ամբողջությամբ արտացոլված են եզրակացություններում: Դրանք հստակ են, համակարգված և բխում են ուսումնասիրության արդյունքներից:

Ներկայացված աշխատության ուժեղ կողմերից մյուսը եզրակացություններ և առաջարկություններ բաժնի Առաջարկություններ հատվածն է, որտեղ հեղինակը հանդես է գալիս հետաքրքիր առաջարկություններով՝ կապված Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության և ՀՀ արտաքին քաղաքականության հնարավոր ուղղությունների հետ:

Աշխատությունն աչքի է ընկնում նաև իր համակարգվածությամբ: Այն ունի հստակ կառուցվածք, տեխնիկական ու գիտական ապարատ: Աշխատության յուրաքանչյուր ենթագլխի վերջնամասում հեղինակը տալիս է ամփոփում, ինչն, ըստ էության, շատ կարևոր է:

Այնուհանդերձ, աշխատանքը զերծ չէ նաև որոշակի թերացումներից, որոնք ներկայացնում ենք ստորև.

1. Ներածության մեջ Գիտական նորույթ բաժնից չի հասկացվում, թե վերջապես ո՞րն է ատենախոսության գիտական նորույթը: ՌԴ և ԱՄՆ արտաքին

քաղաքականության և ազգային անվտանգության որևէ հայեցակարգ, ԱՄՆ Կոնգրեսի տարեկան զեկույցներ կամ ՌԴ նախագահի տարեկան ուղերձներ, ինչպես նաև երկու երկրների ուղեղային կենտրոնների տարեկան զեկույցներն ու վերլուծությունները ներկայացված, օգտագործված և վերլուծված չեն: Ըստ էության մենք ավելի շատ գործ ունենք առկա թեկնածուական ատենախոսությունների, մենագրությունների և հոդվածների հիման վրա արված վերաշարադրանքի, քան գիտական նորույթի հետ:

2. Ատենախոսության Ներածության մեջ ոչ մի խոսք չկա, թե որ թվականից ԱՄՆ-ը պաշտոնապես մուտք գործեց Հարավային Կովկաս և ինչու ներկայացված չէր Սոչիի, Դագոմիսի և Բիշքեքի բանակցություններում: Մինչդեռ հաստատված փաստ է, որ ԱՄՆ-ը պաշտոնապես մուտք գործեց Հարավային Կովկաս 1997թ., երբ փետրվարին ամերիկյան վարչակազմում հիմնվեց Կասպյան տարածաշրջանի հարցերով հատուկ խորհրդականի պաշտոնը: Իսկ մինչ այդ ԱՄՆ-ը մեր տարածաշրջանում ներկայացված էր Թուրքիայի միջոցով:
3. Ատենախոսության մեջ խոսելով Հարավային Օսիայի խնդրի մասին, հեղինակը հղում չի տալիս ոչ մի պաշտոնական փաստաթղթի՝ սահմանափակվելով մենագրություններով կամ հոդվածներով: «Մեդվեդև-Սարկոզի» վեցկետանոց պլանի հղման հասցեն բացակայում է, ՌԴ-ի և Հարավային Օսիայի միջև 2008թ. սեպտեմբերի 17-ին ստորագրված բարեկամության պայմանագրի հղումը և նրա վերլուծությունը ներկայացված չեն: Կարծում ենք աշխատանքը կշահեր, եթե հեղինակը ենթագլխի շարադրման համար օգտագործեր շատ էական աշխատություն՝ ամերիկացի դիվանագետ Ռոնալդ Ասմուսի 2010թ. լույս տեսած «Փոքր պատերազմ, որը ցնցեց աշխարհը» մենագրությունը, որտեղ վերջինս ականատեսի աչքերով բավականին մանրամասն ներկայացրել է Սաակաշվիլի-Սարկոզի զրույցը ՌԴ-ի հետ պայմանագիրը ստորագրելուց առաջ: Զարմանալիորեն ընդհանրապես չի խոսվում ԱՄՆ 43-րդ նախագահ Ջորջ Բուշ կրտսերի՝ 2005թ. մայիսի 9-ին Վրաստան կատարած այցի մասին, երբ Վրաստանը հռչակվեց ԱՄՆ ռազմավարական գործընկեր: Ըստ մասնագետների դա նույնպես ազդեց 2008թ. օգոստոսի 8-ին պատերազմ սկսելու Սաակաշվիլու որոշման վրա: Պայմանագրերին հղումների հետ կապված նույն խնդիրը կա նաև Աբխազիայի մասին ենթագլխում:

4. Կարծում ենք աշխատանքը կշահեր, եթե հեղինակն առանձին գլխով անդրադառնար ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ինստիտուտի շրջանակներում երկու պետությունների համագործակցությանը, բանակցային գործընթացին, որտեղ նաև տեսանելի էին երկու երկրների աշխարհաքաղաքական շահերը:
5. Ատենախոսության մեջ հանդիպում են էջեր (93-94, 96-99, 109-114, 131-138 և այլն), որտեղ հղումներ առհասարակ չկան և պարզ չէ, թե այդ տեղեկատվությունը հեղինակը ինչ աղբյուրից է վերցրել: Բացի այդ ցանկալի կլիներ, եթե օգտագործված գրականության ցանկը ավելի համակարգված ներկայացվեր ըստ համապատասխան բաժինների:

Ամփոփելով վերոշարադրյալը, գալիս ենք հետևյալ հիմնական եզրակացությանը. նշված դիտարկումները արվում են առաջարկի տեսքով և միտում ունեն հեղինակի կատարած ուսումնասիրությունն առավել ամբողջական ու բազմակողմանի դարձնելու:

Հաշվի առնելով վերոնշված փաստերը, կարծում ենք, որ հաջող պաշտպանության դեպքում հեղինակը կարող է հավակնել հայցվող գիտական աստիճանին:

Գրախոսեց՝ Գրիգոր Բալասանյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

Ստորագրությունը հիշատ է՝ Մերի Հովհաննիսյան
ԵՊՀ Գիտքարտուղար

03.09.2024թ.